Շ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՑ

Աշխատանքը Վլադիմիր Իլյիչի գրադարանում

Շ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՑ

ЗК26
Մ 28

Լրաց.
02

Հայրենասեր
ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ
Գրադարան

А 2700

Հայաստանի Պետական Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ — 1960

№ 3400 / Ц

Ш. М. МАНУЧАРЬЯНЦ

РАБОТА В БИБЛИОТЕКЕ
ВЛАДИМИРА ИЛЬИЧА

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1969.

Ես առաջին անգամ ես վիթխարի հուզմունքով գնացի Վլադիմիր Իլյիչի հետ պայմանավորվելու։ Դա 1920 թվականի մարտի 14-ին էր, ցերեկվա ժամը 4-ին։ Վ. Վ. Վորովսկին, որը ինձ ներաշխավորել էր, այդ օրը մի քանի անգամ ասաց.

— Զուշանաք, Վլադիմիր Իլյիչը շատ ճշտապահ է և սիրում է ճշգրտություն։

Վլադիմիր Իլյիչը ինձ ընդունեց Ժողկոմսովետի նիստերի դահլիճում։ Բարևեց, հարցրեց.

— Դո՞ւք եք գրադարանավարուհին։

— Այո՛։

— Նստեցե՛ք։ Դուք մասնագե՞տ եք։

— Ո՛չ, գրադարանային կուրսեր չեմ ավարտել, բայց գիրքը գիտեմ։

— Դուք կարո՞ղ եք ինձ համար ճարել անհրաժեշտ գրականություն և հետևել նորերին։

Ես դրան պատասխանեցի.

— Կարծում եմ, որ կարող եմ, համենայն դեպս կաշխատեմ։

Վերջացնելով խոսակցությունը, Վլադիմիր Իլյիչը ինձ առաջարկեց ծանոթանալ իր գրադարանի հետ և ձեռնամուխ լինել աշխատանքի։

Երբ ես առաջին անգամ մտա Վլադիմիր Իլյիչի աշխատասենյակը, ապշել էի կահավորման պարզությունից և պահարաններում գտնվող գրքերի ոչ-մեծ բանակությունից։ Ինձ թվում էր, թե Ժողկոմսովետի նախագահի գրադարանը

պետք է ունենար բազմահազար գրքեր։ Հետո, աշխատանքի պրոցեսում, հասկացա, որ դա այդպես չէ. Վլադիմիր Իլյիչը իր աշխատասենյակում թողնում էր միայն աշխատանքի ու տեղեկանքների համար ամենաանհրաժեշտ գրքերը և չծանրաբեռնելով իր գրադարանը, խնդրում էր մնացած գրքերն ուղարկել մյուս գրադարանները, որտեղ դրանցից կարող էին օգտվել հարյուրավոր մարդիկ։

Հաջորդ օրը Վլադիմիր Իլյիչը խնդրեց ոչ մի գիրք տեղից չշարժել, ասելով, որ ինքը սովորել է այդ դասավորմանը։ Ես խնդրեցի ինձ թույլ տալ գոնե գեղարվեստական գրականությունը անջատել քաղաքականից։

— Դա կարելի է,— ասաց Վլադիմիր Իլյիչը։ Բայց խնդրեց գրասեղանի աջ կողմում դրված պտտվող գրադարակին, այնուամենայնիվ, ձեռք չտալ։

Գեղարվեստական գրականությունն առանձնացնելուց հետո ես վախենում էի ձեռք տալ մյուս գրքերին։ Մի անգամ, երբ Վլադիմիր Իլյիչը եկավ առանձնասենյակում աշխատելու, ես նրան ասացի.

— Վլադիմի՛ր Իլյիչ, ես անելիք չունեմ։

Նա թղթերի վրայից գլուխը բարձրացրեց, ժպտաց և ասաց.

— Դե գնացե՛ք տուն հանգստանալու։

Ես պատասխանեցի.

— Ես ուզում եմ ոչ թե տվյալ պահի համար, այլ՝ ընդհանրապես, քանի որ դուք թույլ չեք տալիս գրքերին ձեռք տալ։

— Գրքերի հետ ինչ ուզում եք արեք, բայց պտտվող գրադարակին ձեռք մի՛ տաք։

Վերջ ի վերջո նա ինքը խնդրեց դասավորել այդ պտտվող դարակը և այն լրացնել տեղեկատու գրականությամբ։

Այդ պտտվող գրադարակում, որն այնպես պահպանում էր Վլադիմիր Իլյիչը, կար հետևյալ տեղեկատու գրականությունը՝ բազմապիսի բառարաններ, պարտիական և սովետական համագումարների, ՀամԿԳԿ-ի սեսիաների, Կոմին-

տերնի կոնգրեսների արձանագրություններ, որոշումներ և բանաձևեր, բաղմապիսի վիճակագրական տեղեկատուներ, կառավարության օրինադրությունների և կարգադրությունների ժողովածու, մի խոսքով՝ այն ամենը, ինչ կարող էր Վլադիմիր Իլյիչին պետք դալ իր աշխատանքի յուրաքանչյուր պահին։

Ահա Վլադիմիր Իլյիչից ստացած առաջին հրկտողը.

«Դրադարանավարուհուն

Չի՞ կարելի արդյոք

1) յուրաքանչյուր ժողկոմատի բոլոր հրատարակությունները հավաքել առանձին թղթապանակում կամ ըստ գրադարակների։

2) Նմանապես, ՌԿԿ կենտկոմի և տեղական պլենումների հրատարակությունները»։

Վլադիմիր Իլյիչի աշխատասենյակում կային կլասիկ արձակագիրների երկերի ժողովածուներ, հանրագիտական բառարաններ, արտասահմանյան գրականություն, Մարքսի, Էնգելսի ու Լենինի բրոշյուրները և այլ գրքեր։ Մի հատուկ գրադարակում հավաքվում էին ընթացիկ թերթերը, որոնք ըստ ամիսների կազմվում, կոմպլեկտավորվում էին և նույնպես պահվում աշխատասենյակում։

Իմ աշխատանքի սկզբում Վլադիմիր Իլյիչը խնդրեց իր համար հավաքել Մարքսի, Էնգելսի ու իր բրոշյուրները և հարմարության համար հիշյալ հեղինակների բոլոր մանր բրոշյուրները միասին կազմել։ Այսպես, օրինակ՝ կազմվեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», որի լավագույն թարգմանությունները Վլադիմիր Իլյիչը համարում էր Պլեխանովի (մենյան հրատարակություն) և Պ. Օլովսկու թարգմանությունները, կազմվեցին նաև Լենինի 1905—1917 թվականների բրոշյուրները։ Ես Վլադիմիր Իլյիչին առաջարկեցի, թե լավ է ձեռք բերել Մարքսի և Էնգելսի «Չհրատարակված հոդվածները» (1852, 1853, 1854 թվականներ), «Պատերազմ և ռևոլյուցիան»

(1-ին պրակը)։ Նա խնդրեց գտնել և լրացում մտցրեց իր «Մարքսիզմի բիբլիոգրաֆիա» հոդվածում (Մարքսի մասին գրած հոդվածի հավելվածը։ Գրանատի հանրագիտական բառարան, հատ. 28, էջ 244)։

Լենինը մեծ ուշադրություն էր դարձնում Մարքսի և Էնգելսի նամակների հրատարակմանը։ Մի անգամ նա պահանջեց Մարքսի նամակները Կուգելմանին՝ իր առաջարանով։

Իր ամբողջ զբաղվածությամբ հանդերձ, Վլադիմիր Իլյիչը ժամանակ էր գտնում աչքի անցկացնելու այն բոլոր հրատարակությունները, որ նա ստանում էր, իսկ նա խիստ շատ էր ստանում. ոչ միայն այն, ինչ լույս էր տեսնում Ռուսաստանում, այլև մեծ քանակությամբ արտասահմանյան գրականություն, ժուռնալներ ու թերթեր՝ ռուսերեն և օտար լեզուներով։

Վլադիմիր Իլյիչը հասցնում էր գրքեր նայել ո՛չ միայն ազատ ժամանակ, այլև նիստերին։ Սովորաբար Ժողովրդական Կոմիսարների Սովետի կամ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի նիստերից առաջ, ունենալով 5—6 րոպե ազատ ժամանակ, նա հարցնում էր. «Ի՞նչ նոր բան կա։ Աչքի անցկացնելով նոր հրատարակությունները, որոնք իր հետ նիստի էր տանում, իսկ նիստը վերջանալուց հետո որոշ գրքեր վերադարձնում էր այսպիսի նշումներով՝ առանձին պահել աշխատասենյակում կամ լրացուցիչ գրադարանում։

Վլադիմիր Իլյիչը շատ էր սիրում բառարաններ և դրանցից ուներ մեծ քանակությամբ։ Մի անգամ նա առաջարկեցի ձեռք բերել նոր հանրագիտական բառարան։ Վլադիմիր Իլյիչը, որ այդ ժամանակ գիրք էր թերթում, հարցրեց.

— Իսկ դուք ստույգ գիտե՞ք, որ այդպիսի հրատարակություն կա։

— Իհարկե։

— Դե՛, ձեռք բերեցե՛ք։

Վլադիմիր Իլյիչի խնդրանքով նրան ուղարկեցին ուկրաիներեն մի բառարան։

Մեջ եմ բերում ես երկու երկտող.

«Խնդրում եմ ինձ համար գտնել բուլղարա-ռուսերեն բառարան»։

Հեղաբառանավաուեռուն

Խնդրում եմ ինձ համար գտնել և կազմել իտալա-ռուսերեն բառարանը։

De Bubo. Одесса. 1894»։

Մի քանի օրից հետո իտալա-ռուսերեն բառարանը կազմվեց և դրվեց պտտվող գրադարակը։ Երբ ես այդ մասին հայտնեցի Վլադիմիր Իլյիչին, նա, ծիծաղելով, ասաց.

— Արդեն արվա՞ծ է։ Այդպես արա՛գ։ Մերսի։ Ափսոս, որ ժամանակը չի բավարարում իտալերեն կարդալու համար։

Վլադիմիր Իլյիչը սովորաբար իր հանձնարարությունները տալիս էր բանավոր կամ, եթե ես այդ պահին չէի լինում, երկտող էր գրում։

Երբ ես Վլադիմիր Իլյիչին առաջարկեցի ձեռք բերել Չերնիշևսկու երկերի ժողովածուն և կազմել, նա համաձայնեց և խնդրեց կազմել նաև Գերցենի երկերի ժողովածուն, որ իր մոտ կար։ Նա հաճախ վրդովվում էր գրքերի բրոշյուրավորումից. «Ծալում ես թե չէ՝ ամրողջովին ցրիվ է գալիս»,— վրդովվում դրանց հրատարակությունից, նյութերի ընտրությունից. բայց եթե ձեռքն էին ընկնում լավ հրատարակված գրքեր, նա անկեղծորեն ուրախանում էր և նշում այդ բանը։

Այնպիսի ժուռնալներ, ինչպես «Ժեննեդելնիկ Պրավդի», «Վլաստ Սովետով», «ՀԱՄԿԵ-ի տեղեկագիր», «ԱԳԺԿ-ի տեղեկագիր», «Վոլյա Տրուդա» և այլն, Վլադիմիր Իլյիչը խնդրում էր հավաքել և կոմպլեկտներով կազմել։ Այդ բնույթի խնդրանքներ նա սովորաբար գրում էր ժուռնալների վրա, օրինակ՝ «հավաքել եմ կոմպլեկտ իմ դրադարանի համար», կամ՝ «կոմպլեկտ հավաքել», «կազմել», «ընթացիկ № N-ը՝ թղթապանակի մեջ»։

Երբեմն Վլադիմիր Իլյիչը խնդրում էր իր համար գտնել ինչ-որ գիրք, թերթ կամ ժուռնալ, որոնց մասին նշած էր լինում ընկերներից որևէ մեկը։

Ա. Մ. Գորկուն ընդունելուց հետո ինձ հանձնեցին այսպիսի մի երկտող.

«Խնդրում եմ գտնել (կոմպլեկտով)
Ռաբոչի Կրայը
Իվ.-Վոզնեսենսկում։

(Իսկական պրոլետարական բանաստեղծների խմբակը)

Գովում է Գորկին { «Ժիլին»
Արտամոնով
Սեմյոնովսկիյ։

Նրա խնդրանքները ամենատարբեր բնույթի էին լինում։ Այսպես, օրինակ, 1920 թվականի նոյեմբերի 30-ին նա գրում է.

«Խնդրում եմ ինձ համար գտնել՝

Անտոնինո Լաբրիոլի

1) «Պատմական մատերիալիզմ»-ը։
2) Փիլիսոփայության մասին։

Ռուսերեն և ֆրանսերեն»

Ահա մի քանի երկտող ևս.

«Խնդրում եմ ինձ համար գտնել հետևյալ գիրքը.

Պարգևատրման սիստեմները մետաղագործակ. արդյունաբերությունում։

Հոլցմանի առաջաբանով։ Հրատ. Մետաղագործների կենտկոմի, 1919., 87 էջ»։

---

[1] Ըստ երևույթին. դրավիպակ է։ Եղել է բանաստեղծ Ի. Ժիժին.—խմբ.։

խնդրում եմ ինձ համար գտնել Հեգելի
ռուսական թարգմանությունները
1) Տրամաբանություն
2) Ֆենոմենոլոգիա
Հրատ. Պատմա-փիլիսոփայական
Ընկերության, Ռադլովի խմբ.»։
«խնդրում եմ ինձ համար գտնել հետևյալ գերմաներեն գիրքը։
Օտտո Բաուեր. «Տնտեսական քաղաքականության նոր կուրսը Սովետական Ռուսաստանում»։

25/IV Լենին»։

Շատ ցավալի և տհաճ էր լինում, երբ ինչ-որ պատճառով հնարավոր չէր լինում ժամանակին գտնել Վլադիմիր Իլյիչի խնդրած գիրքը, իսկ դա երբեմն պատահում էր։ Մի անգամ ընկերներից մեկը Վլադիմիր Իլյիչի համար բերել էր երկու ժուռնալ՝ «Էկոնոմիստ» և «Նովայա Ռոսիա»։ Վլադիմիր Իլյիչը դրանք ինձ ցույց տվեց (ես այդ պահին մտել էի նիստերի դահլիճը) և ասաց.

— Իսկ ես այս չեմ ստացել։

Ես շատ շվոթվեցի.

— Մեղավոր եմ, չեմ հետևել։

Վլադիմիր Իլյիչը պատասխանեց.

— Ո՛չ թե դուք, այլ նա, ով ինձ ժամանակին պետք է գրականություն ուղարկի։

Վլադիմիր Իլյիչը հաճախ խնդրում էր հսկել, թե ինքը ի՛նչ գրքեր է տուն տանում, և հետևել դրանց աշխատանքային վերադարձնելուն։ Եթե ընկերներից որևէ մեկը Վլադիմիր Իլյիչից գիրք էր խնդրում, նա այդ ընկերներին ուղարկում էր ինձ մոտ՝ միաժամանակ ասելով. «Իմ դրադարանավարուհին խիստ է», իսկ եթե որևէ մեկին գրքեր էր

տալիս, ապա խնդրում էր երկտող թողնել՝ ինձ հանձնելու համար։

Էսհոնների դատավարության ժամանակ մի ընկեր Վլադիմիր Իլյիչի գրադարանից խնդրեց մի քանի գիրք։ Այդ գրքերը պատրաստեցի և, երբ Վլադիմիր Իլյիչը եկավ աշխատասենյակ, նրանից թույլտվություն խնդրեցի դրանք այդ ընկերոջը տալու համար, նախազգուշացնելով, որ Դենիկինի գրքերը՝ «Ռուսական խռովության ուրվագծեր», հատոր 1-ին, պրակ. I և II, պարունակում են Վլադիմիր Իլյիչի նշումները։ Դրան Վլադիմիր Իլյիչը պատասխանեց. «Կարելի է։ Ոչինչ։ Չէ՞ որ նա դրանք վերադարձնելու է»։ Դենիկինի գրքի վրա Լենինը տալիս է գրքի գնահատականը. «Հեղինակը դասակարգային պայքարին մոտենում է կույր բոթոթի նման»։

Վլադիմիր Իլյիչը գրքերի վրա կատարում էր տարբեր և բնորոշ նշումներ։ Օրինակ՝ «Լենին», «Լենինի օրինակը», «Լենինի սեղանին», «Վերադարձնել. Լենինի օրինակն է», «Իմ գրադարանին», «Պահել դրադարակի վրա», «Պահել գաղտնի»։ «Էնգելսի քաղաքական կտակը» ժողովածուի վրա Լենինը գրում է. «Պահել գրադարակի վրա։ 30/IX—1922 թ., Լենին»։

Ռուսաստանի էլեկտրիֆիկացման Պետական Հանձնաժողովի 1920 թվականի № 5 տեղեկագիրն ուղարկելով ընկեր Կրժիժանովսկուն, Վլադիմիր Իլյիչը գրում է. «Գլ. Մ., խնդրում եմ 20—21-ին կարդացեք և մի քանի խոսքի հետ ինձ վերադարձրեք։ Ձեր՝ Լենին»։

1921 թվականի մարտի 9-ին, ՌԿ(բ)Պ X համագումարում, ՌԿ(բ)Պ Կենտկոմի հաշվետվության առթիվ ասած եզրափակման խոսքում քաղվածք էր բերել Ա. Կոլոնտայի «Բանվորական օպոզիցիա» բրոշյուրից[1]։

Կարդալով Ա. Տոդորսկու «Մի տարի հրացանով և գութանով» գրքույկը, որ հրատարակվել էր Տվերի նահանգի Վեսյեգոնսկ քաղաքում, Վլադիմիր Իլյիչը մեծ գովասանքով էր արտահայտվում դրա մասին և XI համագուման-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 32, էջ 232։—Խմբ.։

ում Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի իր քաղաքական հաշվետվության՝ մեջ մեջբերում է արել դրանից։

Աչքի անցկացնելով Բեռլինում հրատարակվող «Ռուսական Կնիգա» գրադատական-բիբլիոգրաֆիական ժուռնալը, Վլադիմիր Իլյիչը հաճախ դրա շապիկի վրա նշումներ էր անում՝ խնդրելով ձեռք բերել արտասահմանյան այս կամ այն հրատարակությունը։ Վլադիմիր Իլյիչի խնդրանքով Հնդկաստանի վերաբերյալ գրքեր էին դուրս գրում։

Մի անգամ Վլադիմիր Իլյիչը պահանջեց երկու գիրք, որոնցից մեկը Նաժիվինի հիշողություններն էին Տոլստոյի մասին։ Իմ պահանջագրին պատասխանեցին, որ այդ գիրքը չկա, այլ կա «Տոլստոյի օրագիրը»։ Դրա առթիվ Վլադիմիր Իլյիչը ինձ գրում է.

«Ընկ. Մանուշարյանց։

Չի՞ կարելի արդյոք ստուգել։

«Տոլստոյի օրագիրը» ինձ հարկավոր չէ, ինձ հարկավոր են Նաժիվինի հիշողությունները Տոլստոյի մասին, որը լույս է տեսել գերմաներեն «Tolstois Denkwürdigkeiten»։

5/XII Լենին»։

Երկրորդ պատվող գրադարակին, որը գտնվում էր գրասեղանի ձախ կողմում, հավաքվում էր այն հարցերի մասին եղած ամբողջ գրականությունը, որոնց վրա Վլադիմիր Իլյիչը տվյալ պահին աշխատում էր, այն է՝ էլեկտրիֆիկացիայի մասին, արհմիութենական դիսկուսիայի մասին և այլն։

Իր յուրաքանչյուր նյութին Վլադիմիր Իլյիչը ուշի-ուշով պատրաստվում էր, նյութեր և քաղվածքներ հավաքում։ Պետք էր հետևել միայն այն բանին, որ նրան անհրաժեշտ ամբողջ գրականությունը լիներ նրա ձեռքի տակ։ Արագորեն թերթելով գիրքը, նա արդեն գիտեր՝ դա իրեն որևէ բան կտա՞, թե՞ ոչ։

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 311—312։—Խմբ.։

1922 թվականի մայիսի 17-ին Վլադիմիր Իլյիչից ստացա հետևյալ երկտողը.

«Խնդրում եմ Սոցիալիստական Ակադեմիայից ինձ համար գտնել կից ցուցակում կապույտ մատիտով նշված գրքերը։

Վ. Ուլյանով (Լենին)։

P. S. Իսկ եթե կա, ապա նաև այդ հարցի վերաբերյալ գրքերի ցուցակը։

Լենին»։

Ըստ երևույթին, Վլադիմիր Իլյիչը պատրաստվում էր գրելու աշխատանքի գիտական կազմակերպման վերաբերյալ աշխատություն։ Նրա խնդրանքով այդ հարցի վերաբերյալ գրքեր ջոկեցի նրա գրադարանից, ինչպես նաև կազմեցի այն գրքերի ցուցակը, որոնք կային ԱՊԽ-ի գրադարանում։ Բացի դրանից, նա խնդրեց այդ նույն հարցի վերաբերյալ գրքերի ցուցակ պահանջել Աշխատանքի ինստիտուտից։ Սոցիալիստական Ակադեմիայից բերված գրքերը Վլադիմիր Իլյիչը խնդրեց թողնել իր աշխատասենյակում։

Այդ հանձնարարությունները տալուց հետո նա գնաց Գորկի և խնդրեց իր աշխատասենյակից ավտոմատով զանգահարել իրեն ու հայտնել այն, ինչ որ արված կլինի։ Բայց դրանից շատ չանցած՝ Վլադիմիր Իլյիչը հիվանդացավ և Մոսկվա վերադարձավ միայն աշնանը, 1922 թվականի հոկտեմբերի 2-ին։ Այդ ժամանակվա ընթացքում արդեն ես նրա համար ամբողջ գրականությունը պատրաստել դրել էի իր բնակարանի կողքին գտնվող լրացուցիչ գրադարանը։ Գորկիից վերադառնալուց հետո Վլադիմիր Իլյիչը մի երկու անգամ եկավ այդ գրադարանը, աչքի անցկացրեց գրքերը և խնդրեց դրանք չհավաքել։ Բայց Վլադիմիր Իլյիչին արդեն էլ չհաջողվեց այդ աշխատությունը դրել։

Երբ 1922 թվականի նոյեմբերին Վլադիմիր Իլյիչը պատրաստվում էր Կուլիթի Կոմինտերնի IV կոնգրեսում, պահանջեց Կոմինտերնի III կոնգրեսի սղագրական հաշվետվությունը և բանաձևերը, Կոմինտերնի III կոնգրեսին

նոր տնտեսական քաղաքականության մասին իր տված գերմաններեն ղեկուցումը և պարենհարկի մասին իր գրած բրուշյուրը գերմաններեն։

1922 թվականի վերջին, երբ Վլադիմիր Իլյիչի գրադարանը սկսել էր շատ աճել, ես նրան առաջարկեցի վերցնել որոշ բաժիններ։ Վլադիմիր Իլյիչը համաձայնեց և ինձ հանձնարարեց խոսել Նադեժդա Կոնստանտինովնայի և Մարիա Իլյինիշնայի հետ, թե նրանց ի՞նչ է հարկավոր թողնել։

Երջապատողների նկատմամբ Վլադիմիր Իլյիչի ունեցած վերաբերմունքի մեջ մեծ սրտակցություն կար։ Նա մեր՝ շարքային աշխատողներիս նկատմամբ շատ ուշադիր էր, հոգատար, ղգայուն։ Նրա ղեկավարությամբ աշխատելը հեշտ էր և հաճելի։

Ա 3200

Թարգմանիչ՝ Ս. Եաչատուրյան
Խմբագիր՝ Վ. Հաուրբյուրյան
Նկարիչ՝ Վ. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Գ. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Ն. Ախլուրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Մկրտչյան

Պատվեր 179։ Տիրաժ 3000։

Հանձնված է արտադրության 1/II—1960 թ.։
Ստորագրված է տպագրության 20/II—1960 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32։ տպ. 1,0 մամ.=0,82 պայմ. մամ., հրատ 0,5 մամ.։
Գինը՝ 10 կ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի Մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Աբովյանի փողոց, № 65։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրա
FL0018259

A II 8700